2025 թվականի մարտի 24-ից 29-ը Հնդկաստանի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
2. Հայկ Հակոբյան, Կադաստրի կոմիտեի գեոմատիկայի կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդական:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Հնդկաստանի Հանրապետություն (Գուրուգրամ), մարտի 24-ից 29-ը:

4. **Հրավիրող կողմը.**
   Հնդկաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Հնդկաստանի տեխնիկական և տնտեսական համագործակցության ծրագրի ներքո կազմակերպված հողերի կառավարման միջազգային աշխատաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

   Միջոցառման հիմնական թեմաներն էին.

   - Հողերի կառավարման տեխնոլոգիաների արդիականացումը և դրա ազդեցությունը:
   - Ռեսուրսների մոբիլիզացումը և կառավարումը:
   - Անօդաչու թռչող սարքերի հիման վրա իրականացվող ցամաքային հետազոտությունների պլանավորումը և վերջինիս առանձնահատկությունները:
   - Բարձր լուծաչափով անօդաչու թռչող սարքերով կազմված քարտեզների և հավաքագրված տվյալների արդյունավետությունը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Աշխատաժողովին մասնակցում էին Հնդկաստանի մի շարք պետական կառույցների, Հարյանա ինստիտուտի, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ

կողմերի ներկայացուցիչներ, որոնք հանդես եկան հողերի կառավարմանն առնչվող ելույթներով:
Բացի այդ, աշխատաժողովին մասնակցում էին նաև 22 երկրի ներկայացուցիչներ, որոնք ներկայացրին զեկույցներ իրենց երկրներում հողերի կառավարման մեթոդների, ինստիտուցիոնալ համակարգերի, տվյալների հավաքագրման և կառավարման մոտեցումների վերաբերյալ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Հաշվի առնելով աշխատաժողովի հիմնական նպատակը, այն է՝ կարողությունների բարձրացում և գիտելիքի փոխանակում, դրա ընթացքում չեն ընդունվել որոշումներ և չեն ստորագրվել փաստաթղթեր:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Աշխատաժողովի կազմակերպիչները և մասնակից երկրները հայտնեցին իրենց պատրաստակամությունը զարգացնելու երկկողմ և եռակողմ համագործակցությունը՝ հողերի կառավարման ոլորտում գիտելիքների, լավագույն փորձի, քաղված դասերի փոխանակման ուղղությամբ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Հայկ Հակոբյան 02.04.2025 թ.